

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #82, 2009-05-07

Ազգային

ԱԶԳԱՆՎԵՐ ԶԵՌՆԱՐԿՈՒՄ Ի ՇԱՀ ԳԱԼԻՔ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ

Ժողովրդավարություն հաստատելու անվան տակ Ամերիկայի Միացյալ Նահանգները Իրաքը վերածեց կատարյալ քաոսի: Երբեմնի հարուստ տնտեսություն ունեցող այդ երկրից այսօր քրիստոնյաները փախչում են փրկվելով չղադարող ամենօրյա ահաբեկչական գործողություններից:

Անվերջանալի վախի ու հուսահատության մեջ գտնվող Իրաքում ապրող անպաշտպան հայ համայնքը աստիճանաբար բռնեց գաղթի ճամփան:

Ահա այս կացության մեջ չափազանց օգտակար գործունեություն ծավալեց Լոս Անջելեսում գործող Իրաքահայերի օգնության հիմնադրամը, որի նպատակը Իրաքից հեռանալու ցանկություն ունեցող մեր հայրենակիցներին դեպի հայրենիք Հայաստան ուղղորդելն էր փրկելով նրանց ուժացումից ու վտանգներից:

Սկսած 2005-ից հիմնադրամի կայքէջ դիմեցին մոտ ինը տասնյակ ընտանիքներ, որոնցից ընտրվեցին ամենակարիքավորները: Նրանք բոլորն էլ խոր հավատ ունենալով հիմնադրամի ատենապետ Սարգիս Դերձակյանի, հանձնախմբի վարչականներ Խաչիկ Ջանոյանի, Րաֆֆի Կարապետյանի եւ մյուսների հանդեպ, վճռեցին ներգաղթել Հայաստան: Հիմնադրամը մինչ այդ մեծ ջանքերով դրամագլուխ էր ստեղծել եւ լուծել մի շարք կազմակերպչական հարցեր: Հանձնախումբը մեծ պատասխանատվություն էր կրում մեր հայրենակիցների հանդեպ, ովքեր Իրաքում էին թողնում իրենց տունը, կայքը եւ հիմնովին տեղափոխվում հայրենիք:

Առաջին քարավանին հետեւեցին երկրորդը, երրորդը, չորրորդը:

Հայաստանյան իշխանությունները նպաստեցին ներգաղթածներին փաստաթղթերի արագ ձեւակերպման գործում, ինչպես նաեւ ընձեռեցին սոցիալական փաթեթից օգտվելու հնարավորություն, որը էական դերակատարություն ունեցավ հատկապես այն ընտանիքների անդամների համար, ովքեր որոշել էին վերջնականապես վերաբնակվել ու հաստատվել Հայաստանում:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միզրացիոն գործակալությունը 2008-ին կատարեց ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող Իրաքի քաղաքացիների կարիքների գնահատման հետազոտություն: Հետազոտության վերլուծությունը բացահայտեց, որ բոլոր ընտանիքները բնակարանի կարիք ունեն եւ դժվարությամբ են հայթայթում վարձակալած բնակարանի ամսական վճարը:

ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունը միգրացիոն գործակալության հետազոտության արդյունքներին ծանոթանալով, ձեռնամուխ եղավ բարեգործական մի ծրագրի՝ Երեւանում եւ գյուղերում ձեռք բերել բնակարաններ, վերանորոգել ու անհատույց տրամադրել իրաքահայ փախստականի կարգավիճակ ունեցող բազմանդամ ընտանիքներին: Սկզբում առողջական խնդիրներ ունեցողներին, այնուհետեւ՝ այլ ցանկացողներին: Եվ ահա 2009-ի մարտ ամսից Նոր Նորք համայնքի ուսանողական հանրակացարանի առանձին հարկաբաժնում ապրում են Իրաքից արտագաղթած հայ ընտանիքներ: «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը, որն զբաղվում է փախստականների սոցիալական խնդիրների իրագործման ծրագրերով, կարիքավոր ընտանիքներին տրամադրեց անհրաժեշտ կենցաղային իրեր՝ մահճակալներ, սեղան, աթոռներ եւ այլ պարագաներ: Ընտանիքներն իրենք ընտրեցին՝ ապրել գյուղում, թե՛ քաղաքում:

Զորակցության այս քայլը օգնեց սոցիալապես կարիքի մեջ եղող մեր հայրենակիցներին դուրս գալու ծանր կացությունից: Տեղահանված, անապահով այս ընտանիքներն այժմ իրենց ապագան միայն հայրենի երկրում են տեսնում:

Լոս Անջելեսի իրաքահայերի օգնության հիմնադրամը իր համեստ միջոցներով որոշեց նյութապես օգնել այդ կացարաններում ապրող ընտանիքներին: Նրանք շուրջ երեք ամիս իրենց թիկունքում կզգան Ամերիկայում ապրող իրաքահայ հայրենակիցների հոգածությունը եւ կլինեն նրանց ուշադրության կենտրոնում:

Հայրենիքում անվտանգ ապրելու առավելությունը շատ ընտանիքների վերջնականապես կապեց մայր հողին, այս առումով բացառիկ էին հիմնադրամի ջանքերը եւ արդարացված, քանզի հայրենանվեր նախաձեռնության կարեւորագույն նպատակը ոչ միայն Իրաքից հեռանալու ցանկություն ունեցող մեր հայրենակիցներին եւ նրանց սերունդներին ի վերջո Հայաստան բերելն էր, այլեւ նրանց մեջ արյան հիշողություն արթնացնելը:

Լոս Անջելեսի Իրաքահայերի միությունը ծրագրում է առաջիկայում եւս գտնել նպատակային միջոցներ՝ օգնելու հայրենի հողում վերաբնակված ընտանիքներին:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ, Լոս Անջելեսի Իրաքահայերի օգնության հիմնադրամի պաշտոնական ներկայացուցիչ